«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԱՆՁԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԱՐՔԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԹՈՆԵՐԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Առարկան՝ *Աշխարհագրություն*

Հետազոտող ուսուցիչ՝ *Ավագյան Սրբուհի*

Ուսումնական հաստատություն՝ *Արտաշատի ավագ դպրոց*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Գլուխ 1. Անձի և նրա վարքագծի զարգացմանն ուղղված մեթոդները 5

Գլուխ 2. Սովորողների գեղագիտական կրթության և դաստիարակության իրականացումը բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի կարևորությունը: Թեմայի կարևորությունը կայանում է նրանում, որ՝ առանց անձի և նրա պատասխանատու վարքագծի անհնար է ունենալ օրինակելի աշակերտներ: Յուրաքանչյուր մասնագիտական գործունեություն իր ազդեցությունն է ունենում անձի հոգեբանական առանձնահատկությունների վրա: Անձի անհատական և մասնագիտական զարգացման մեջ առկա է կայուն փոխպայմանավորվածություն. անձի անհատական զարգացման մակարդակը էական ազդեցություն է ունենում մասնագիտական գործունեության վրա, իսկ մասնագիտական զարգացումն էլ իր հերթին ազդում է անհատի հոգեկերտվածքի վրա: Դիտարկելով անձնային որակները կարելի է ասել, որ դրանք բարդ և բազմաշերտ են, որոնք ներառում են սոցիալական, սոցիալ-հոգեբանական, մշակութային բաղադրիչներ: Անձի որակներն ու ընդունակություններն այնպես սերտ են փոխկապակցված, որ երբեմն անհնարին է դրանք առանձնացնել: Սակայն դպրոցում աշակերտի անձնային որակները մասնագիտական գործունեության մեջ ընդունակությունների դրսևորման արդյունք են այն դեպքում, երբ ընդունակությունները անձի «թաքնված» հնարավորություններն են, որոնք բացահայտվում են միայն որոշակի պայմաններում: Աշակերտի մասին խոսելիս պետք է անդրադառնալ նաև նրա հմտություններին, որոնց շարքին են դասվում գիտելիքները, կարողությունները, փորձը, մոտիվացիան: Փորձը ձևավորվում է ուսուցման և դրա կիրառման ճանապարհով, լայն իմաստով այն գիտելիքների, կարողությունների և հմտությունների միասնություն է:

Ուսումնասիրելով այս թեման՝ ուզում եմ պարզել.

1. Որքանո՞վ է կարևոր անձի վարքագծի ձևավորման համար բնագիտական առարկաների դերը
2. Ո՞ր մեթոդներն են առավել արդյունավետ հատկապես ավագ դպրոցում այս թեման առավել ամբողջական յուրացնելու համար

Աշխատանքի նպատակը: Թեմայի նպատակն է բացահայտել բնագիտական առարկաների այն հատկությունները, որոնցով պայմանավորված է անձի պատասխանատու վարքագծի ձևավորումն ու զարգացումը: Ձևավորել անձի մոտ հետաքրքրվածություն, պատասխանատվություն և պարտաճանաչություն, զարգացնել հմտություններ, ինչպես նաև նրանց արդյունավետ աշխատանքի դրդելու լավագույն միջոցներ փնտրել: Ձանազանել թեմայի յուրացման համար ընտրված առավել արդյունավետ մեթոդները հատկապես ավագ դպրոցում, ինչպես նաև դրանք կիրառելու նպատակահարմարություն:

Աշխատանքի խնդիրները: Առաջադրված նպատակների իրականացման համար աշխատանքում ուշադրության են արժանանում հետևյալ խնդիրները.

- ✓ Բացահայտել որքանով են աշակերտները կարողանում համագործակցել միմյանց հետ, ինչպես են արդյունավետ կառավարում ժամանակը, մշակում տեղեկատվությունը, հանգում եզրակացությունների:
- ✓ Վերհանել բնագիտական առարկաների առանձնահատկությունները անձի և պատասխանատու վարքագծի ձևավորման գործում
- ✓ Աշակերտների մոտ զարգացնել հետաքրքրություն, մոտիվացիա, շահագրգռվածություն բնագիտական առարկաների նկատմամբ

ԱՆՁԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԱՐՔԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԹՈՆԵՐԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գլուխ 1. Անձի և նրա վարքագծի զարգացմանն ուղղված մեթոդները

Սույն հետազոտական աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվել է մանկավարժության ամենաբարդ և միևնույն ժամանակ ելակետային խնդիրներից մեկը՝ անձի և նրա զարգացման խնդիրը, պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները առարկայի դասավանդման գործընթացում:

Մարդն իր էությամբ և բնույթով շատ բարդ կենսաբանական էակ է: Նրան ուսումնասիրելու և նրա էությունն ու բնույթը, վարքագիծը հասկանալու փորձեր կատարվել են դեռևս հնագույն ժամանակներից: Անձի ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրություններն իրականացվել են դեռևս հնագույն ժամանակներում փիլիսոփայական մտքի հանճարների կողմից, որոնց թվում են՝ Արիստոտելը, Պլատոնը, Հիպոկրատը և այլք: Հումանիստական մանկավարժության և հոգեբանության մեջ կիրառվում է այն գաղափարը, որ մարդը երբեք չի գտնվում կայուն, ստատիկ վիճակում, այլ մշտապես փոփոխվում է:

Ժամանակակից գիտության մեջ անձի և նրա վարքագծի զարգացման տեսությունները բազմաթիվ են: Սակայն հարկ է նշել, որ այդ տեսություններում հաճախ հանդիպում են հակասական և շատ իրարամերժ մոտեցումներ: Անձի զարգացումը շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում և հենց այս հանգամանքով պայմանավորված գիտնականների մի մասն առաջարկում է անձի զարգացումն ուսումնասիրել՝ բաժանելով այն կյանքի փուլերի:

Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել երեխաների և մանկավարժների միջև փոխհարաբերություններին, դիտարկելով այն որպես երեխաների վարքագծի զարգացման կարևորագույն նախապայման:

Անձի ձևավորման գործընթացում է առաջնահերթ գործոն է դաստիարակությունը թե տանը և թե դպրոցում: Մեծ կարևորություն պետք է տալ,

թե ճանաչողության և էմոցիոնալ տեսանկյունից ինչպես է մանկավարժների ազդեցությամբ ձևավորվում աշակերտների «Ես» հայեցակարգը: Երեխաների վրա մեծ ազդեցություն է ունենում շրջապատի և դպրոցի գովասանքը և խրախուսանքը, ինչն էլ մոտիվացնում է նրանց ավելի շատ ճիշտ արարքներ կատարել և խուսափել սխալներից: Հետևաբար օրինակելի քաղաքացիներ ունենալու համար անհրաժեշտ է դեռևս վաղ տարիներից նպատակաուղղված գործողություններով ազդեցություն ունենալ նրանց գիտակցության և ենթագիտակցության վրա:

Մանկավարժի օգնությամբ աշակերտների մոտ ձևավորվում է որոշակի պատկերացումներ լավի և վատի, չարի և բարու վերաբերյալ և ապրում հենց այդ պատկերացումներով: Ընդ որում այս պատկերացումներն ամենևին էլ օբյեկտիվ չեն, այլ սուբյեկտիվ մտածողության արդյունք: Հետևաբար վերջինս մեծ կարևորություն ունի մանկավարժական դաստիարակության տեսանկյունից: Կարելի է նշել, որ մանկավարժական դաստիարակության կարևորագույն խնդիրն է ազդեցություն ունենալ աշակերտների վարքագծի, պատկերացումների ձևավորման գործընթացում: Մանկավարժական դաստիարակությունը պետք է զբաղվի ոչ միայն վարքագծի կանոններ սովորեցնելով, այլ նաև պետք է ապահովի այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն աշակերտների կողմից գիտակցաբար այդ կանոնների կիրառմանը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հետազոտական-ստեղծագործական կողմն այն է, որ օգնում է սովորողներին հայտնաբերել նոր գիտելիքներ արդեն յուրացված գիտելիքների հիման վրա: Գիտելիքը յուրացվում է այն չափով, ինչ չափով աշակերտը այն հայտնագործել ու կառուցել է իր մտապատկերում:[1]

Մեր հետազոտության համար կարևոր են դպրոցական կյանքի տարիների փուլերը՝

- Աշխատասիրության և թերարժեքության զգացման կոնֆլիկտի փուլ (6-12 տարեկաններ)
- «Ես»-ի ձևավորման փուլ (13-18 տարեկաններ)

Ներշնչանքի փուլը անձի ձևավորման կարևորագույն փուլն է: 6-12 տարեկան երեխաների հիմնական կոնֆլիկտը կապված է աշխատասիրության և թերարժեքության զգացմամբ: Ապագայում աշխատասեր և ինքնավստահ քաղաքացիներ ունենալու համար, անհրաժեշտ է այս տարիքում մեծ ուշադրություն

[1] Հ. Գարդներ, 'Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ', Երևան, ԱՅՈԵՔՍ, 2003

դարձնել, որպեսզի երեխայի առջև դրված խնդիրներն իր համար լինեն հաղթահարելի, հակառակ դեպքում՝ երեխան կապրի հիասթափություն և կկորցնի վստահությունն իր հանդեպ, ինչն էլ կհանգեցնի զարգանալու և կատարելագործվելու ձգտման անկմանը:

«Ես»-ը ձևավորվում է 13-18 տարեկաններում: Կարծում ենք, սա մանկավարժական դաստիարակության իրականացման հիմնական փուլն է: Այս փուլում երեխային հետաքրքրում են հետևյալ հարցերը՝ «Ո՞վ եմ ես», «Ինչպիսի՞ն է իմ հետագա ճանապարհը»: Այս փուլի վտանգը «Ես»-ի զգացողության թուլացումն է, հետևաբար մանկավարժական դաստիարակությունը պետք է նպաստի աշակերտների մոտ «Ես»-ի կայացմանը և նրանց մոտ ճիշտ պատկերացումներ ստեղծի՝ կապված իր անձի և իր ապագայի հանդեպ: Հիմնվելով այսն ամենի վրա՝ կարելի է ասել, որ մանկավարժական դաստիարակության համար առաջնային նշանակություն ունեն 6-13 և 13- 18 տարիքային ժամանակահատվածները:

Աշակերտների վարքագծի վրա ազդելու լավագույն միջոցը նպաստավոր միջավայրի ստեղծումն է: Ուսուցիչները պետք է փորձեն հասկանալ, թե ինչպես է աշակերտն ընկալում աշխարհը: Աշակերտների վարքագծի զարգացման վերաբերյալ տեսակետը ձևավորել է անձնական փորձից՝ օգնելով աշակերտներին ովքեր ունեն օգնության կարիք: Այդ աշակերտների հետ շփվելով, նրանց հետ անցկացրած ժամերով գտնում ենք բազմաթիվ հարցերի պատասխաններ միջանձնային հարաբերությունների վերաբերյալ: Յուրաքանչյուր ոք աշխարհն ընկալում է յուրովի: Աշխարհի մասին ընկալումները և պատկերացումները ձևավորվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ազդեցությունների արդյունքում: Կատարված հետազոտություններից ելնելով կարելի է եզրակացնել, որ մանկավարժական դաստիարակությունը պետք է ուղղված լինի ճիշտ պատկերացումների ձևավորմանը, ինչի արդյունքում էլ աշակերտի մոտ կձևավորվի օրինակելի քաղաքացուն բնորոշ վարքագիծ:[2]

Երեխան հաճախ ճնշվում է շրջապատի կողմից՝ կորցնելով սեփական ես-ը և նմանվում մնացածին: Մեկ այլ դեպքում, նա չի կարողանում իր մեջ ուժ գտնել հակառակվելու այն կարծրացած մոտեցումներին, որոնք արդեն ձևավորված են: Նա սեփական ճանապարհը որոնելու փոխարեն փորձում է անել այն, ինչ արդեն ընդունված է շրջապատի, ծնողների և ընկերների կողմից և դուր է գալիս նրանց: Երեխան պետք է օգտագործի իր ընտրության հնարավորությունը, քանի որ հենց իր ընտրությամբ է պայմանավորված իր կյանքի որակը և ապագան: Անհրաժեշտ է

[2] Зигмунд Фрейд, Психология масс и анализ человеческого «Я», 1921г.

երեխային զերծ պահել արտաքին բացասական ազդեցություններից, որոնք կարող են փոխել ինքնիրացվող մարդու հատկանիշները:[3]

Կարող ենք նշել մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են աշակերտների վարքագծին, կրթությանը և հասարակական առաջընթացին: Դրանք են՝

1. Կրթությունը հասարակական առաջընթացի և բարեփոխումների հիմնարար մեթոդն է
2. Կրթությունը հասարակական գիտակցությանը մասնակից դառնալու գործընթացների կարգավորումն է, իսկ հասարակության վերակառուցման միակ հաստատուն ձևը աշակերտի գործունեության հիմքում սոցիալական գիտակցությունը դնելն է:
3. Կրթության միջոցով աշակերտը կարող է ձևակերպել իր սեփական նպատակները, կարող է կազմակերպել իր սեփական միջոցներն ու ռեսուրսները՝ դրանով իսկ որոշակիորեն և արդյունավետ կերպով ձևավորելով ինքն իրեն այնպես, ինչպիսին ցանկանում է լինել ապագայում:
4. Կրթության հարցերով հետաքրքրվող յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի, որ դպրոցը հասարակական առաջընթացի եւ բարեփոխումների առաջին և առավել արդյունավետ միջոցն է:
5. Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գիտակցի իր կոչման արժանապատվությունը: Նա կոչված է ապահովել հասարակության ճիշտ զարգացումը

Այսպիսով, ուսումնասիրելով վերը թվարկված հեղինակների տեսությունները գալիս ենք հետևյալ եզրահանգումների՝

- Օրինակելի աշակերտի որակներն ունեն ինտեգրատիվ բնույթ:
- Անձի դաստիարակության համար ամենակարևոր շրջաններն են 6-12 և 13-18 տարեկան ժամանակահատվածը:
- Անձի դաստիարակության համար ելակետային նշանակություն ունի միջավայրը:
- Մշակույթը կարևոր ազդեցություն ունի թե՛ մարդու վարքի վրա ընդհանրապես և թե՛ անձի դաստիարակության վրա մասնավորապես:[4]

Անձի ինքնակրթությամբ զբաղվելու կարողությունը զարգանում է ուսումնառության ընթացքում, երբ նա ձգտում է ձեռք բերելու ավելի շատ

[3] Альфред Адлер, Практика и теория индивидуальной психологии, 2011г
[4] John Dewey, The School and Society: The Child and the Curriculum, 1956г.

գիտելիքներ, քան նախատեսված է կրթական ծրագրերով: Այդպիսով նա սկսում է ուշադրություն դարձնել նաև այն անձնային որակներին, որոնք անհրաժեշտ են մասնագիտական զարգացման ընթացքում կամ խանգարում են դրան:

Գլուխ 2. Սովորողների գեղագիտական կրթության և դաստիարակության իրականացումը բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում

Անձի մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները քննարկելիս հարկ է նշել, թե անձի վարքագծի ձևավորման և զարգացման վրա ինչպիսի ազդեցություն են ունենում բնագիտական առարկաները:

Հանրակրթական դպրոցի համար կարևորագույն խնդիր է անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը, որտեղ առանձնանում և ընդգծվում է աշակերտների գեղագիտական դաստիարակությունը: Այն իրականացնել է բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում: Ինչպես գիտենք ամեն մի գիտության մեջ քիչ թե շատ կա գեղագիտական տարր, որի հաղորդումն աշակերտներին պետք է իրականացվի ուսուցիչների կողմից: Մինչդեռ պետք է նշել, որ մեզանում բնագիտական առարկաների օգնությամբ սովորողների գեղագիտական կրթության և դաստիարակության խնդիրներն առ այսօր խոր և ամբողջական ուսումնասիրության չեն ենթարկվել: Իրականացվել է հետազոտություն բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում: Աշակերտների գեղագիտական կրթության ու դաստիարակության համար մշակվել է գեղագիտական հայեցակարգ, ընտրվել ուսուցման ակտիվ մեթոդներ, բացահայտվել և մանկավարժորեն հիմնավորվել է ֆիզիկայի, մաթեմատիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության և այլ բնագիտական առարկաների, հատկապես գեղագիտական հնարավորությունները և ներուժը, ստեղծագործաբար օգտագործվել գեղագիտական դաստիարակության սկզբունքները, մեթոդները, ձևերն ու միջոցները:

Կատարվել է մեկ ամսվա կտրվածքով հետազոտություն ավագ դպրոցում՝ 10-11-րդ դասարաններում, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ, տարբեր հայացքներ ու մոտեցումներ այս կամ այն հարցի վերաբերյալ:

Կազմվեցին թեստեր, որոնք սկսվում էին հեշտ հարցերից, որ հասանելի լինեին բոլորին, այնուհետև՝ գնալով բարդանում էր: Ինձ համար հետաքրքիր էր փորձարկել թեստերի անցկացումը, որոնք հնարավորություն են տալիս աշակերտին ազատ և ինքնուրույն մտածել, վերլուծություններ անել, սեփական կարծիքը հայտնել, պատասխանատու որոշումներ կայացնել, ինքնուրույն կողմնորոշվել հմտությունների զարգացման և ճանաչողական գործընթացում:

1. Կարևորու՞մ եք արդյոք բնագիտական առարկաների դերը անձի զարգացման գործում:
   - Այո
   - Ոչ
2. Կարևո՞ր է արդյոք բնագիտությունը մարդու կյանքում:
   - Այո
   - Ոչ
3. Արժե՞ ավելացնել բնագիտական առարկաների դասաժամերը դպրոցում:
   - Այո
   - Ոչ
4. Բնագիտական առարկաների դասաժամերը նպատակահարմա՞ր են անձի վարքագծի զարգացման համար:
   - Եթե Այո, ինչու՞
   - Եթե Ոչ, ինչու՞

5. Ի՞նչ եք կարծում, կարևո՞ր է արդյոք աշակերտների մասնակցությունը հետազոտական թեմաներին բնագիտական առարկաների վերաբերյալ:

- Գրեք Ձեր կարծիքը՝

Առաջին երկու հարցերին բոլորը միաձայն պատասխանել են այո, ինչը նշանակում է, որ բոլորն էլ կարծում են, որ բնագիտական առարկաները կարևոր են մարդու կյանքում և սերտորեն փոխկապակցված է տարբեր գիտությունների հետ:

Աշակերտների մեծամասնությունը կարծում է, որ պետք է ավելացնել դասաժամերի քանակը, կամ գոնե ավելացնել արտադասարանական դասաժամեր:

Կան աշակերտներ, որ կարծում են, որ ներկա ծրագրով նախատեսված ժամերը բավական են բնագիտական առարկաներն ուսումնասիրելու համար, սակայն պետք է ավելացնել գործնական պարապմունքներ բնության մեջ. կազմակերպել տարբեր էքսկուրսիաներ:

Աշակերտների 60%-ը կարծում է, որ բնագիտական առարկաները անձի վարքագծի ձևավորման, զարգացման վրա մեծ դեր ունի:

Հետազոտության արդյունքնում պարզ դարձավ, որ բնագիտական առարկաների ուսուցմամբ պայմանավորված է նաև աշակերտների գիտական աշխարհայացքի և վարքագծի ձևավորումն ու զարգացումը, այն է՝ գիտելիքներ ունենալ բնության օրենքների և օրինաչափությունների, երևույթների, բնության

նկատմամբ ներդաշնակ հարաբերությունների մասին: Կրտսեր, միջին և ավագ դպրոցներում աշակերտներին գեղագիտորեն կրթելու և դաստիարակելու լայն հնարավորություններ կան ոչ միայն ուսումնական, այլև՝ արտադասարանական և արտադպրոցական գործընթացներում: Հատկապես բնագիտական առարկաների ուսուցիչների խնդիրն է օգտագործել այդ հնարավորությունները և հասնել սովորողների գեղագիտական կրթության և դաստիարակության, ինչպես նաև վարքագծի ձևավորման գործում բարձր արդյունքների: Հետազոտության արդյունքում խնդիր էր դրվել ուղղորդել աշակերտներին, բացահայտել բնագիտական առարկայի «գեղագիտական տարրերը» և հաղորդակից դարձնել նրանց: Մեր կարծիքով բնագիտական առարկաների ուսուցման համակարգում գեղագիտական դաստիարակությունը կարևոր բաղադրիչ է: Այդ առարկաներն արդյունավետ դասավանդելու համար թեմաները կապել ենք կյանքի հետ, ցույց ենք տվել, որ դրանք մեր կյանքի հիմքն են:

Մենք գտնում ենք, որ մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության առարկաների գծով սովորողների հետաքրքրությունը խթանելու համար նրանց պետք է «տանել» այդ խորհրդավոր, զարմանահրաշ աշխարհը: Այն կարող են անել փորձառու ուսուցիչները՝ օգտագործելով իրենց վարպետությունը և այդ առարկաների ընձեռած հնարավորությունները: Ըստ մեզ կարևոր է նաև, որ բնագիտական խմբի առարկաների ուսուցիչներն աշակերտներին ներկայացնեն նաև իրենց առարկայի գծով վերջին նորույթները և հայտնագործությունները:

Հետազոտության ընթացքում առանձնացվել է սովորողների գեղագիտական կրթության զարգացման 4 հիմնական բաղադրիչներ՝

1. Իրավունքների ճանաչում
2. Պարտականությունների ընդունում
3. Պարտավորությունների ընկալում
4. Կրթական էթիկա

Այս ամենը անմիջականորեն կապված են դաստիարակության ձևերի հետ:

Իրավունքների ճանաչման և պարտավորությունների ընդունման գործընթացում հիմնական դերը պատկանում է ուսուցչին, ում միջոցով աշակերտի մոտ ձևավորվում է իրավական մշակույթ:

Նախագծային աշխատանքը կատարելիս աշակերտը պետք է մշակի աշխատանքային պլան, որը պետք է կազմակերպի, ծրագրի, համակարգում,

ղեկավարի և/կամ վերահսկի աշխատանքը, ունենա անմիջական ղեկավար, որին ներկայացնի իր հաշվետվությունները:

Նախագծային աշխատանքային գործունեությունը պահանջում է մեծ պատասխանատվություն: Աշակերտը վերլուծում և գնահատում է ռազմավարական ու կազմակերպչական նշանակության խնդիրները, դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ, իրականացնում է ռազմավարական պլանավորում: Աշակերտը պետք է ունենա տրամաբանելու, արագ կողմնորոշվելու կարողություն: Ղեկավարն էլ իր հերթին ընդունում է որոշումներ, լուծում է հիմնախնդիրներ և տալիս հանձնարարականներ: Բացահայտում, վերլուծում և գնահատում է ռազմավարական ու կազմակերպչական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ է տալիս:

Նախագծային աշխատանքների արդյունքնում ձևավորվում են փոխազդեցության մի քանի հիմնական ձև՝ համագործակցություն (անձի համագործակցությունը ընդհանուր խնդիրներ լուծելու նպատակով), մրցակցություն (անհատական կամ խմբային պայքար որոշակի արժեքների, գիտելիքների համար), կոնֆլիկտ (մրցակցող կողմերի միջև թաքնված կամ բացահայտ բախում):[5]

Մեր կողմից մշակված հարցարանի միջոցով պարզել ենք, թե որ հոգեբանական հատկություններն են աշակերտներին օգնում նախագծային աշխատանքում: Հարցարանը բաղկացած էր 10 հարցից: Հարցման մասնակիցներին հնարավորություն էր տրված ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը: Հարցման արդյունքները խմբավորելուց և վերլուծության ենթարկելուց հետո բացահայտվել են այն հատկությունները, որոնցով պայմանավորված է աշակերտների գործունեության արդյունավետությունը: Դիագրամ 1-ում ներկայացված են արդյունքները: Ինչպես տեսնում ենք, ա ռավել արտահայտված հոգեբանական որակները շփվելու ունակությունն ու փոխվստահությունն են:

[5] Е. М. Бабосов, Общая социология, Минск, “Тетра Системс”, 2004, 640 с.



Դիագրամ 1. Աշակերտներիի գործունեության արդյունավետությունը պայմանավորող գործոնները

Ինչպես տեսնում ենք, աշակերտներն իրենց աշխատանքի հաջողությունը կապում են հոգեբանական որակների հետ, որոնք ձեռք են բերվում նախագծային աշխատանքային փորձի ընթացքում:

Իրականացված հետազոտությունը ենթադրում էր հոգեբանական այնպիսի որակների բացահայտում, որոնք աշակերտներին խանգարում կամ օգնում էին նախագծային աշխատանքային գործունեության ընթացքում: Այս հարցին տրված բնորոշումները հաստատում են, որ պատասխանատվության և պարտաճանաչության ցուցանիշները գերակշռող են: Դա երևում է դիագրամից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերտները պատասխանատվությամբ մոտեցան հարցին, կատարեցին հետաքրքիր ուսումնասիրություններ և վերլուծություններ, կարողացան ճիշտ ծրագրել իրենց աշխատանքները, սիրով և մեծ ոգևորությամբ կատարեցին աշխատանքները: Ուսուցչի համար էլ է հետաքրքիր աշակերտների հետազոտական մոտեցումները:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում եկանք այն համոզմունքի, որ երեխան նպատակաուղղված է շարժվելու առաջ՝ լուծելով իր առջև դրված խնդիրները, գնահատելով իրականությունը և վստահության արժանանալով: Նրանք ունեն ներքին պահանջմունք՝ առաջ շարժվելու և զարգանալու համար, սակայն նրանց կարող է խանգարել ընկալումը:

Ամփոփելով մեր կատարած ուսումնասիրությունները՝ կարող ենք հանգել մի շարք եզրակացությունների.

1. Աշակերտների գեղագիտական կրթության և դաստիարակության, վարքագծի ձևավորման առումով դպրոցում դասավանդվող բնագիտական բոլոր առարկաներն էլ ունեն լայն հնարավորություն, մնում է միայն, որ ուսուցիչները բացահայտեն դրանք և հասցնեն աշակերտների գիտակցությանը:
2. Բնագիտական առարկաների արդյունավետ դասավանդման գործում կարևոր նշանակություն ունեն մասնավոր մեթոդիկաները, որոնց դասավանդումը դպրոցներում պետք է դնել էլ ավելի բարձր մակարդակի վրա:
3. Բնագիտական առարկաների միջոցով աշակերտների գեղագիտական կրոթության և դաստիարակության իրականացման ուղղությամբ ՀՀ դպրոցներում զգալի փորձ է կուտակվել, պետք է այն խոր ուսումնասիրել և տարածել ուսուցիչների շրջանում:
4. Սովորողների գեղագիտական կրթությունը և դաստիարակությունը, վարքագծի ձևավորումը կարելի է իրականացնել ոչ միայն բնագիտական առարկաների ուսուցման, այլև՝ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքի գործընթացում:

Ինչը վերաբերում է բնագիտական առարկաների դասավանդմանը դպրոցներում, հետազոտությունների արդյունքներից ելնելով եկանք այն եզրահանգման, որ անհրաժեշտ է բնագիտական առարկաների դասաժամերն ավելացնել, որոնցից մեկը կօգտագործվի որևէ գիտահետազոտական ինստիտուտ այցելելու նպատակով,

մյուսը՝ բնության մեջ գործնական աշխատանք կատարելու համար: Որից հետո հանձնարարել աշակերտներին իրականացնել հետազոտական կամ նախագծային աշխատանքներ բնագիտական շուրջ:

Յուրաքանչյուր բնագիտական առարկա կարող է իր ազդեցությունն ունենալ անձի վարքագծի ձևավորման վրա, ինչն էլ պայմանավորում է նրա մասնագիտական զարգացման օրինաչափությունները:

Աշխատանքում կատարված հետզոտությունների արդյունքների հիման վրա առաջարկվում է.

Աշակերտների որակավորումը բարձրացնելու հեռանկարային ուղղություններ համարել՝ ուսումնառության և գիտելիքի կիրառական գործունեության միավորումը, կրթական ծառայությունների տրամադրումը պետական և տեղական ինքնակառավարման ծառայողների մասնագիտական պահանջներին համապատասխան, ուսումնական գործընթացը կազմակերպելու համակարգայնության և ամբողջականության ապահովումը, մանկավարժական մեթոդների և տեխնոլոգիաների անընդհատ կատարելագործումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ. Գարդներ, ‘Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ’, Երևան, ԱՅՈԵՔՍ, 2003
2. Աթայան Կ., Ավագյան Ա., ‘Համահայկական գիտաժողովի նյութերի ժողովածու’, Երևան, 2018
3. Альфред Адлер, Практика и теория индивидуальной психологии, 2011г
4. Бабосов Е. М., Общая социология, Минск, “Тетра Системс”, 2004, 640 с.
5. Зигмунд Фрейд, Психология масс и анализ человеческого «Я», 1921г
6. John Dewey, The School and Society: The Child and the Curriculum, 1956г.